

ք. Երևան

«15» սեպտեմբերի 2020թ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վանի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ղ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Սյունիքի մարզի գ. Դարբասի միջնակարգ, ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ և ՀՀ Վայոց ձորի մարզի գ. Եղեգիսի դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և յուրաքանչյուր չափաբաժնի համար աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 420 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում

1.4.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքման հաջորդող օրերի քանակը,

1.4.2 հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից համապատասխան եզրակացության դեպքում՝ եզրակացության մեջ նշված օրերի քանակը:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է անհայտ անհնար.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը).

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին.

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատուց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները՝

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին.

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1 839 346 893 (մեկ միլիարդ ութ հարյուր երեսունինը միլիոն երեք հարյուր քառասունվեց հազար ութ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ, որից 306 557 816 (երեք հարյուր վեց միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար ութ հարյուր տասնվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, որից՝

- 33 Սյունիքի մարզի գ. Դարբասի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ – 614 968 384 (վեց հարյուր տասնչորս միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար երեք հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ, որից 102 494 731 (մեկ հարյուր երկու միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

- 33 Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ – 617 121 641 (վեց հարյուր տասնյոթ միլիոն մեկ հարյուր քսամեկ հազար վեց հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ, որից 102 853 607 (մեկ հարյուր երկու միլիոն ութ հարյուր հիսուներեք հազար վեց հարյուր յոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

- 33 Վայոց ձորի մարզի գ. Եղեգիսի դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ – 607 256 868 (վեց հարյուր յոթ միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, որից 101 209 478 (մեկ հարյուր մեկ միլիոն երկու հարյուր ինը հազար չորս հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պատվիրատուն պայմանագրի ընդհանուր գնից մինչև 25%-ի չափով կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի չափը և տրամադրման ժամկետները որոշվում են Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների ու ձեռքբերվող նյութերի (այդ թվում սարքերի) ժամկետների վերաբերյալ Պատվիրատուին ներկայացվող գրավոր տեղեկատվության (հիմնավորման) առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

¹ Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (յուրաքանչյուր չափաբաժնի համար 420 օրացուցային օր) կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 4, N 4.1 և N 5 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնականություն
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար


(ստորագրություն)



ՎԱՊԱԼԱՌՈՒ՝

«Վանի» ՍՊԸ
ք. Երևան, Արին-Բերդի 2/1
«Հայթիզնեբանկ» ՓԲԸ
Հ/Հ 115004674079
ՀՎՀՀ 00412375

Տնօրեն՝



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
 ՀՀ Սյունիքի մարզի գ. Դարբասի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային)
 շենքի կառուցման աշխատանքների կատարման

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
1.1. Համաշինարարական աշխատանքներ					
Հողային աշխատանքներ					
1	III-րդ կարգի գրունտի մշակում խրամուղիներում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողիցք	խմ	1021	700	714700
2	Փոստրակի և խրամուղիների հատակի և կողերի վերջնական հարթեցում ձեռքով	խմ	70	500	35000
3	Հետլիցքի համար պահանջվող գրունտի բարձում էքսկավատորով ավտոմեքենաների վրա հանքավայրում	խմ	1604	200	320800
4	Նույնի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	խմ	1604	500	802000
5	III կարգի գրունտի ետլիցք խրամուղի և փոստրակներ բուլդոզերով մինչև 75մ հերավորությունից	խմ	2495	500	1247500
6	Գրունտի աստիճանաբար տոփանում օդաճնշական ձեռքի տոփանիչով	խմ	2495	500	1247500
7	Գրունտի ետլիցք հիմքերի ծոց ձեռքով, տոփանումով	խմ	200	700	140000
Ընդամենը հողային աշխատանքներ				1,500 0	4,507,500.0
Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր					
8	Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B 7,5 դասի բետոնով	խմ	30	30000	900000
9	Խամքարբետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի բետոնով	խմ	31.5	35000	1102500
10	Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7,5դասի բետոնով	խմ	35.5	50000	1775000
11	Խամքարբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B -7,5 դասի բետոնով	խմ	5.8	35000	203000
12	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	335 65	65000	21817250
13	Ամրան Փ8A240C	տն	8.242	300000	2472570
14	Ամրան Փ16A500C	տն	6 197	300000	1859070
15	Ամրան Փ18A500C	տն	5 509	300000	1652580
16	Ամրան Փ25A500C	տն	0 115	300000	34560



Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
17	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	5 1	75000	382500
18	Ամրան Փ8A240C	տն	0 510	330000	168300
19	Ամրան Փ22A500C	տն	1.742	330000	574860
20	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.232	700000	162470
21	Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ B-20 դասի բետոնով	խմ	198 95	65000	12931750
22	Ամրան Փ6, 8A240C	տն	1.697	300000	509100
23	Ամրան Փ10A500C	տն	3 084	300000	925200
24	Ամրան Փ12A500C	տն	9 748	300000	2924430
25	Ամրան Փ16A500C	տն	0 507	300000	151980
26	Ամրան Փ22A500C	տն	1.551	300000	465300
27	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.288	700000	201600
28	Ուղղաձիք ջրամեկուսացում բիտումի մածիկով (2 անգամ)	քմ	390	1200	468000
29	Բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	2.3	1000	2300
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր				51,684,320.0
	ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				
30	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	63.9	70000	4473000
31	Ամրան Փ8A240C	տն	2.494	300000	748287
32	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.131	300000	39300
33	Ամրան Փ22A500C	տն	7.452	300000	2235720
34	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.01	700000	7280
35	Շրջանակների միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	0.500	80000	40000
36	Ամրան Փ8A240C	տն	0.023	300000	7020
37	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.051	300000	15360
38	Շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	6.80	70000	476000
39	Նույնը, մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	141 54	70000	9907800
40	Ամրան Փ6, 8A240	տն	3.077	300000	923235
41	Ամրան Փ8A500C	տն	1 189	300000	356580
42	Ամրան Փ12A500C	տն	2 017	300000	605058
43	Ամրան Փ16A500C	տն	1 497	300000	448950



Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
44	Ամրան Փ18A500C	տն	4.683	300000	1404930
45	Ամրան Փ25A500C	տն	0.115	300000	34572
46	Ամրան Փ28A500C	տն	0 744	300000	223170
47	Պողպատե թերթից ներդիրների տեղադրում	տն	0.219	700000	153300
48	Միաձույլ ե/ք գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	29.21	80000	2336800
49	Ամրան Փ6, 8A240	տն	0.605	300000	181422
50	Ամրան Փ12A500C	տն	1 601	300000	480240
51	Ամրան Փ18A500C	տն	0 180	300000	54000
52	Դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	162.78	40000	6511360
53	Նույնի բետոնացում B-20 դասի բետոնով, ամրանավորումով	խմ	103.2	50000	5159000
54	Ամրան Փ6, 8A240C	տն	0.634	300000	190311
55	Ամրան Փ10A500C	տն	8 935	300000	2680470
56	Ամրան Փ12A500C	տն	7 859	300000	2357730
57	Ամրան Փ16A500C	տն	1.175	300000	352560
58	Միաձույլ ե/ք բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	1.91	70000	133700
59	Ամրան Փ6A240	տն	0.058	300000	17400
60	Ամրան Փ12A500C	տն	0 246	300000	73800
61	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում +3,3նիշի վրա B-20դասի բետոնով	խմ	221 5	70000	15505000
62	Ամրան Փ6A240	տն	0.415	300000	124380
63	Ամրան Փ12A500C	տն	19.457	300000	5837100
64	Ամրան Փ14A500C	տն	5 474	300000	1642110
65	Ամրան Փ18A500C	տն	0.013	300000	3900
66	Միաձույլ ե/ք հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով ՄՀ-1 (ճիստ)	խմ	6.80	80000	544000
67	Ամրան Փ8A240	տն	0 184	300000	55080
68	Ամրան Փ18A500C	տն	0.367	300000	110160
69	Միաձույլ ե/ք հովհարի պատրաստում +2.7նիշում B-20դասի բետոնով (սալ ՄՍ-1, +հեծան ՄՀ-1)	խմ	1 7	70000	119000
70	Ամրան Փ8A240	տն	0 029	300000	8610
71	Ամրան Փ8A500C	տն	0 073	300000	21840
72	Ամրան Փ12A500C	տն	0.008	300000	2400
73	Ամրան Փ16A500C	տն	0 046	300000	13800
74	Ամրան Փ18A500C	տն	0 015	300000	4500
75	ԱՍ-1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում +0,45 դեպի +3,3նիշ B-20 դասի բետոնով	խմ	1.9	80000	152000



Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
76	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0 5	60000	30000
77	Ամրան Փ8A240	տն	0.055	300000	16410
78	Ամրան Փ16A500C	տն	0.274	300000	82170
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				66,900,815.0
	Միջնորմներ				
79	Միջնորմների շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	քմ	397.58	4000	1590320
80	Միջնորմների շարում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	142.3	25000	3556750
81	Ամրան Փ8A500C	տն	3.216	35000	112556.395
	Ընդամենը միջնորմներ				5,259,626.4
	Դռներ և պատուհաններ				
82	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաին դռներ	քմ	36.31	80000	2904608
83	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-5 արտաքին վիտրաժի բացվող մաս(դուռ)	քմ	1.92	80000	153600
84	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան)	քմ	1 20	55000	66000
85	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-3-- V-5 արտաքին վիտրաժների չբացվող (խույ) մաս	քմ	17.04	55000	937200
86	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրաժի բացվող մաս (դուռ)	քմ	2 30	45000	103680
87	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրաժի չբացվող (խույ) մաս և V-2 խույ վիտրաժ	քմ	25.0	40000	1001200
88	Ներքին, ապակեպատ, երկգույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԷ Դ-1	հատ	13	40000	520000
89	Ներքին, խույ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԷ Դ-2---Դ-3	հատ	41	35000	1435000
90	Ներքին երկփեղկանի դռներ (маятник петля)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԷ Դ-4---Դ-4*	հատ	4	40000	160000
91	Մետաղական, խույ, մուգ մոխրագույն դռան տեղադրում Դ-5	քմ	1.7	40000	68016
92	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	քմ	3 4	3000	10200
93	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5 3	40000	210112
94	Սանհանգույցի էկրանների տեղադրում	քմ	12 6	4000	50400
95	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	100.1	42000	4204620


Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
96	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	64.2	40000	2566880
97	Մետաղապլաստե, բաց մոխրագույն, պատուհանագոգերի տեղադրում 200մմ լայնությամբ	գծմ	86.2	5000	431100
	Ընդամենը դռներ և պատուհաններ				14,822,616.0
	Հատակներ				
98	Հողի տուփանում խճաքարով	քմ	1680	1000	1680000
99	Ամրանավորված բետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12,5 դասի բետոնից	խմ	252 0	40000	10080000
100	Նույնի ամրանավորում Φ10A500C դասի ամրանային ցանցով (8.3կգ/քմ)	տն	13.9	300000	4183200
101	Խարամաբետոն 45մմ հաստ B-12,5դասի թեթև բետոնով	քմ	1840.0	2000	3680020
102	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ բիտումի մածիկի վրա	քմ	1643.2	2000	3286460
103	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	577.68	1500	866520
104	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ	քմ	1262 3	2000	2524660
105	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	454.34	13000	5906420
106	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում	քմ	16 71	15000	250650
107	Նույնի, ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	16 71	1500	25065
108	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրանիտե սալերով	գծմ	171.8	2000	343600
109	Խեցեսալերով (նվազագույնը 8մմ հաստ) հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	123.34	9000	1110060
110	Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	գծմ	80.1	1500	120135
111	Վինիլային (հետերոգեն ՊՎԲ 2մմ հաստ. 0,7մմ հաստ պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	934.74	9000	8412649 2
112	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎԲ 4,5մմ հաստ 1մմ հաստ հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=100մմ շրիշակների մակերեսը)	քմ	257.44	11000	2831787 2
113	Կավրոլինից (4,5մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116 8	7000	817600
114	Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ. (շրիշակների պատրաստումով)	քմ	34.32	3000	102960

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Ընդամենը հատակներ				46,221,786.4
	Տանիք				
115	Ֆ-1 Մետաղական ֆերմաների մոնտաժում պողպատե քառանկյուն խողովակներից	տն	3 681	550000	2024440
116	ՆԷ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 250x250x10մմ, ամրան Փ12A500C)	տն	0 181	550000	99492 8
117	Մետաղական ֆերմաների կապերի մոնտաժում ուղղանկյուն պողպատե խողովակներից	տն	6 616	550000	3638800
118	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ, ամրան Փ12A500C)	տն	0.198	550000	108889
119	Տանիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղանկյուն խողովակներից (սյուներ, պարզունակներ)	տն	19.468	550000	10707400
120	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ, անկյունակ, ամրան Փ8A500C)	տն	1.165	550000	640678 5
121	Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	31.309	50000	1565427 3
122	Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով	քմ	1329	1500 00	1994203 822
123	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծպեղ, կավարամած)	խմ	35 2	220000	7750600
124	Նույնի երեսում (տակից) ՕՏՍ - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ	քմ	1749.2	6000	10495140
125	Գոլորշամեկուսիչ շերտի փոում	քմ	1749 2	1000	1749190
126	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ հաստ) չայրվող բազալտե հանքաքամքակե սալերով	քմ	1749 2	5500	9620545
127	ՕՏՍ սալերի տեղադրում 10մմ հաստ. (քիտումային կղմինդրի հիմնատակ)	քմ	2019.7	6000	12118200
128	Քիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված քիտում 1,3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը 40տարի)	քմ	2019.7	10000	20197000
129	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խմ	35.2	30000	1056900
130	ՕՏՍ սալի մասնակի լաքապատում	քմ	297 2	2000	594360
131	Ջրհորդանների պատրաստում 0 5մմ հաստ. ցինկապատ թիթեղից, գունավոր ներկվածքով	գծմ	156 9	5500	862950
132	Ջրընդունիչ ձագարների տեղադրում Փ150մմ	հատ	19	12000	228000
133	Ջրիոս խողովակների տեղադրում 150x150մմ	գծմ	95 6	5000	478100

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
134	Էվակուացիոն աստիճանների մոնտաժում	տն	0 707	800000	565600
135	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.707	50000	35350
	Ընդամենը տանիք				86,531,266 4
	Հարդարման աշխատանքներ				
136	Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	2847 1	2200	6263510
137	Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	313.02	2700	845154
138	Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	10 13	4500	45594
139	V-2, V-4, V-5 Վիտրաժների վերևի մասի լցափակում գիպսոկարտոնե հարթասալերով	քմ	12.9	5000	64500
140	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	1051 1	2500	2627700
141	Առաստաղների բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	98.22	3000	294660
142	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	2879 0	1700.000	4894303 4
143	Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	313.02	2200	688644
144	Առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	1512.8	1800	2723058
145	Առաստաղների բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	43 04	2300	98992
146	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	364.66	2000	729320
147	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	քմ	307 56	9000.00	2768040
148	Կախովի առաստաղ գիպսաստվարաթղթե հարթասալերով 9,5մմ հաստության, ստատների տեղադրումով	քմ	461.73	4000	1846920
149	Ներքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	քմ հոռի	332	1500	498000
150	Կախովի առաստաղների պատրաստում պլաստիկ սալերով САЙДИНГ	քմ	55 18	4500 00	248310
151	Ողղանկյուն պողպատե խողովակներից բազրիքների մոնտաժում	տն	0 593	700000	415010.4
152	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.593	80000	47429 76
	Ընդամենը հարդարման աշխատանքներ				25,099,145.6
	Արտաքին աստիճաններ, թեքահարթակներ				
153	Խամքարե զանգվածի պատրաստում աստիճանների տակ	խմ	16.65	7000	116550
154	Միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7 5 դասի բետոնով	խմ	8 85	35000	309750
155	Բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	10 84	35000	379400
156	Աստիճանների երեսապատում 50մմ հաստ. բազալտե սալերով	քմ	11 45	15000	171750
157	Հարթակների և աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ բազալտե սալերով	քմ	70 2	13000	912600

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
158	Խամքարե զանգվածի պատրաստում թեքահարթակների տակ	խմ	7 47	7000	52290
159	Նույնի, միաձույլ բետոնե ծածկույթի պատրաստում B-7 5 դասի բետոնով	խմ	2 33	35000	81550
160	Թեքահարթակի միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	2.71	35000	94850
161	Նույնի, միաձույլ ե/բետոնե բազրիթների պատրաստում 120մմ հաստության B-12,5 դասի բետոնով	խմ	0.925	60000	55500
162	Ամրան Ф10А500С	տն	0 087	300000	26100
163	60x40x3մմ պողպատե ուղղանկյուն խողովակներից բռնածող	տն	0 219	600000	131280
164	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.219	80000	17504
	Ընդամենը արտաքին աստիճաններ և թեքահարթակներ				2,349,124.0
	Արտաքին հարդարում				
165	Պատերի ջերմամեկուսացում արտաքինից 100մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 30մմ, ստորինը 70մմ հաստ) բազալտե մանրաթելային սալերով	քմ	1411 6	5000	7058000
166	V-4, V-5 արտաքին վիտրաժների վերևի մասի երեսապատում պլյումինե "Alukobond" թիթեղով	քմ	3 5	20000	70000
167	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտի շաղախով մետաղացանցի տեղադրումով	քմ	1302 4	4000	5209440
168	Նույնի բարձրորակ ներկում դեկորատիվ, բաց գույնի, ճակատային ներկով	քմ	1302.40	2500	3256000
169	Պատերի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստ խարսխումով	քմ	146 0	15000	2190000
170	Պատուհանագոգերի տեղադրում բազալտե սալերից 30մմ հաստ 150մմ լայնությ	քմ	13 61	18000	244890
171	Բացվածքների լցափակում ապակեբլոկներով	քմ	0 96	20000	19200
172	Արտաքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում հարդարման աշխատանքների համար	քմ ուղ. ստորեկ	523	1000	523000
	Ընդամենը արտաքին հարդարում				18,570,530.0
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Համաշինարարական աշխատանքներ				321946730
	Ամբարձիչ				
169	Պտուտակային, ապակեպատ ամբարձիչ հաշմանդամ երեխաների համար 320կգ բեռնունակությամբ FORSTOR կամ համարժեք	հատ	1	2500000	2500000
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Ամբարձիչ				2,500,000.0
	1.2 Զեռուցում				
1	Ալյումինե ջեռուցման սարքերի տեղադրում h=500մմ	սեկց	561	9000	5049000
2	Ալյումինե ջեռուցման սարքերի տեղադրում h=350մմ	սեկց	34	7000	238000

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
3	Ջերմակարգավորիչ փական $\Phi 20$ մմ	հատ	41	7000	287000
4	Ջերմակարգավորիչ փական $\Phi 25$ մմ	հատ	10	4000	40000
5	Փական անցումային $\Phi 20$ մմ	հատ	45	5000	225000
6	Փական անցումային $\Phi 25$ մմ	հատ	10	1500	15000
7	Ավտոմատ օդահան փական $\Phi 15$ մմ	հատ	51	1800	91800
8	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում, փորձարկումով և կցամասերի տեղադրումով PN10 $\Phi 20 \times 2,8$ մմ	գծմ	236	1500	354000
9	Նույնը, $\Phi 25 \times 3,5$ մմ	գծմ	240	1800	432000
10	Նույնը, $\Phi 32 \times 4,5$ մմ	գծմ	102	2100	214200
11	Նույնը, $\Phi 40 \times 5,6$ մմ	գծմ	150	2500	375000
12	Նույնը, $\Phi 50 \times 6,9$ մմ	գծմ	258	3000	774000
13	Պոլիպրոպիլենային անկյունակ 90° $\Phi 20$ մմ	հատ	139	300	41700
14	Նույնը, $\Phi 25$ մմ	հատ	61	400	24400
15	Նույնը, $\Phi 32$ մմ	հատ	73	500	36500
16	Նույնը, $\Phi 40$ մմ	հատ	60	600	36000
17	Նույնը, $\Phi 50$ մմ	հատ	102	700	71400
18	Պոլիպրոպիլենային անկյունակ 45° $\Phi 20$ մմ	հատ	4	700	2800
19	Նույնը, $\Phi 25$ մմ	հատ	6	800	4800
20	Նույնը, $\Phi 32$ մմ	հատ	2	900	1800
21	Նույնը, $\Phi 40$ մմ	հատ	2	300	600
22	Նույնը, $\Phi 50$ մմ	հատ	6	320	1920
23	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ $\Phi 20 \times 20 \times 20$ մմ	հատ	11	300	3300
24	Նույնը, $\Phi 20 \times 20 \times 25$ մմ	հատ	4	340	1360
25	Նույնը, $\Phi 25 \times 20 \times 25$ մմ	հատ	9	350	3150
26	Նույնը, $\Phi 25 \times 20 \times 32$ մմ	հատ	3	360	1080
27	Նույնը, $\Phi 25 \times 25 \times 32$ մմ	հատ	1	370	370
28	Նույնը, $\Phi 32 \times 20 \times 32$ մմ	հատ	15	400	6000
29	Նույնը, $\Phi 32 \times 20 \times 40$ մմ	հատ	3	420	1260
30	Նույնը, $\Phi 32 \times 25 \times 32$ մմ	հատ	2	450	900
31	Նույնը, $\Phi 40 \times 20 \times 40$ մմ	հատ	12	500	6000
32	Նույնը, $\Phi 40 \times 20 \times 50$ մմ	հատ	3	550	1650
33	Նույնը, $\Phi 40 \times 25 \times 40$ մմ	հատ	8	600	4800
34	Նույնը, $\Phi 40 \times 25 \times 50$ մմ	հատ	1	650	650
35	Նույնը, $\Phi 50 \times 20 \times 50$ մմ	հատ	25	600	15000
36	Նույնը, $\Phi 50 \times 25 \times 50$ մմ	հատ	2	800	1600
37	Շրջանցիկ ծունկ $\Phi 20$ մմ	հատ	42	400	16800
38	Նույնը, $\Phi 25$ մմ	հատ	9	500	4500
39	Նույնը, $\Phi 40$ մմ	հատ	1	300	300



Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
40	Փ20x2,8մմ խողովակների ջերմամեկուսացում ռետինե մեկուսիչով ձ=10 մմ	մ	20	320	6400
41	Նույնը, Փ25x3,5մմ խողովակների	մ	64	800	51200
42	Նույնը, Փ32x4,5մմ խողովակների	մ	18	1000	18000
43	Նույնը, Փ40x5,6մմ խողովակների	մ	13	1200	15600
44	Նույնը, Փ50x6,9մմ խողովակների	մ	98	1500	147000
45	Մետաղ ռադիատորների և խողովակների ամրացման համար	կգ	130	1800	234000
ԸՆԴԱՄԵՆՆԻ ԸՆԹԱՑՈՒՄ					8,857,840.0
1.3 Օղակադրություն					
1	Ներածման-արտածման սարք, Լն=3600խմ/ժամ, Լա=3200խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ Օտ=27,6կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման Լն=3600մ3/ժամ 5) օդամղիչ արտածման Լա=3200մ3/ժամ, 6) աղմկախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	4500000	4500000
2	Ներածման-արտածման սարք, Լն=2400խմ/ժամ, Լա=2400խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ Օտ=17,4կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման Լն=2400մ3/ժամ 5) օդամղիչ արտածման Լա=2400մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	3000000	3000000

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
3	Ներածման-արտածման սարք, Լն=5885խմ/ժամ, Լա=6140խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի և ելքի վրա 2) օդատաքացուցիչ ՕՏ=52կՎտ 3) օդի պտտվող ռեկուպերատոր 4) օդամղիչ ներածման Լն=5885մ3/ժամ 5) օդամղիչ արտածման Լա=4860մ3/ժամ, 6) ձայնախլացուցիչ 7) օդի կարգավորիչ փական մուտքի և ելքի վրա 8) ճկուն ներդիրներ 9) թրթռամեկուսիչ սարքավորման տակ 10) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	5000000	5000000
4	Ներածման սարք, Լն=1820խմ/ժամ որը լրակազմված է՝ 1) օդազտիչ մուտքի վրա 2) օդատաքացուցիչ ՕՏ=13կՎտ 3) օդամղիչ ներածման Լն=1820մ3/ժամ 4) ձայնախլացուցիչ 5) օդի կարգավորիչ փական մուտքի վրա 6) ճկուն ներդիրներ 7) ավտոմատիկայի կոմպլեկտ	կ-տ	1	2500000	2500000
5	Օդափոխիչ կանալային L=540խմ/ժամ P=200Պա N=0,8կՎտ	հատ	1	10000	10000
6	Օդափոխիչ կանալային L=275խմ/ժամ P=100Պա N=0,7կՎտ	հատ	1	10000	10000
7	Օդափոխիչ կանալային L=100խմ/ժամ P=100Պա N=0,5կՎտ	հատ	2	8000	16000
8	Օդափոխիչ կանալային L=325խմ/ժամ P=100Պա N=0,7կՎտ	հատ	1	10000	10000
9	Օդափոխիչ կանալային L=800խմ/ժամ P=220Պա N=0,8կՎտ	հատ	1	10000	10000
10	Ճաղաչար պլաստմասայից Φ 200մմ	հատ	20	1000	20000
11	Նույնը 200x200	հատ	3	1000	3000
12	Նույնը 300x300	հատ	14	1500	21000
13	Նույնը 350x350	հատ	18	1800	32400
14	Նույնը 400x200	հատ	82	1800	147600
15	Նույնը 400x300	հատ	10	2000	20000
16	Նույնը 400x400	հատ	2	2100	4200
17	Նույնը 500x500	հատ	5	2500	12500
18	Ալյումինե, դրսի ճաղաչար 300x900	հատ	3	4000	12000
19	Նույնը 400x900	հատ	4	4500	18000
20	Նույնը 400x1000	հատ	3	6000	18000
21	Օդի կարգավորիչ փական ձեռքի կարգավորումով Φ 100մմ	հատ	20	2000	40000
22	Նույնը, 150x150մմ	հատ	2	2500	5000
23	Նույնը, 200x150մմ	հատ	3	3000	9000
24	Նույնը, 200x200մմ	հատ	77	4000	308000
25	Նույնը, 300x150 մմ	հատ	3	2500	7500
26	Տուփեր ցինկապատ թիթեղից $\delta=0.7$ մմ	քմ	57.0	10000	570000
27	Օդատար ցինկապատ թիթեղից $\delta=0.5$ մմ	քմ	813.8	6000	4882800

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
28	Օդատարների մեկուսացում հանքային բամբակով $\delta=50$ մմ	քմ	35	2000	70000
29	Մետաղ օդատարների ամրացման համար	կգ	120	500	60000
ԸՆԴԱՄԵՆԸ 1.3 Օդափոխություն					21,317,000.0
1.4 Ն-1-Ն-4 Ներածման համակարգերի ջերմամատակարարում					
1	Պոլիարոպիլենային խողովակների տեղադրում, փորձարկումով և կցամասերի տեղադրումով PN10 $\Phi 25 \times 3,5$ մմ	գծմ	11	1800	19800
2	Նույնը, $\Phi 32 \times 4,5$ մմ	գծմ	13	2500	32500
3	Նույնը, $\Phi 40 \times 5,6$ մմ	գծմ	133	3500	465500
4	Նույնը, $\Phi 63 \times 8,7$ մմ	գծմ	17	5000	85000
5	Հաշվեկշիռ փական $\Phi 15$ մմ	հատ	1	5000	5000
6	Նույնը, $\Phi 20$ մմ	հատ	1	7000	7000
7	Նույնը, $\Phi 25$ մմ	հատ	2	9000	18000
8	Փական անցումային, խցանային $\Phi 25$ մմ	հատ	2	10000	20000
9	Նույնը, $\Phi 32$ մմ	հատ	2	15000	30000
10	Նույնը, $\Phi 40$ մմ	հատ	4	20000	80000
11	Պոլիարոպիլենային անկյունակ 90° $\Phi 25$ մմ	հատ	4	450	1800
12	Նույնը, $\Phi 32$ մմ	հատ	6	500	3000
13	Նույնը, $\Phi 40$ մմ	հատ	10	600	6000
14	Նույնը, $\Phi 63$ մմ	հատ	2	1000	2000
15	Պոլիարոպիլենային եռաբաշխիչ $\Phi 40 \times 32 \times 40$ մմ	հատ	2	500	1000
16	Նույնը, $\Phi 40 \times 40 \times 63$ մմ	հատ	2	1000	2000
17	Նույնը, $\Phi 63 \times 25 \times 63$ մմ	հատ	2	1000	2000
18	Շրջանցիկ ծունկ $\Phi 25$ մմ	հատ	1	320	320
19	Նույնը, $\Phi 32$ մմ	հատ	1	400	400
20	Նույնը, $\Phi 40$ մմ	հատ	1	500	500
21	$\Phi 25 \times 3,5$ մմ խողովակների ջերմամեկուսացում ուտինե մեկուսիչով $\delta=10$ մմ	մ	11	1000	11000
22	Նույնը, $\Phi 32 \times 4,5$ մմ խողովակների	մ	13	1200	15600
23	Նույնը, $\Phi 40 \times 5,6$ մմ խողովակների	մ	133	1500	199500
24	Նույնը, $\Phi 63 \times 8,7$ մմ խողովակների	մ	17	2000	34000
25	Մետաղ խողովակների ամրացման համար	կգ	26	2500	65000
ԸՆԴԱՄԵՆԸ 1.4 Ն-1-Ն-4 Ներածման համակարգերի ջերմամատակարարում					1,106,920.0
1.5 Կաթնայնառան սարքավորումներ					
1	Ավտոմատացված ջրային էլեկտրակաթա "Северянин" Q=120կվտ հզորությամբ	կ-տ	1	1200000	1200000
2	Ավտոմատացված ջրային էլեկտրակաթա "Северянин" Q=90կվտ հզորությամբ	կ-տ	1	1000000	1000000
3	Ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DPH 120/250-40T մակնիշի (сдвоенный) G=3,57լսմ/ժ, H=11,2մ, N=536-339վտ, n=2780-2080պտ/րոպ	կ-տ	1	70000	70000

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
4	Օդափոխության համակարգի ջրի շրջանառության պոմպ DPH 60/250-40T մակնիշի (сдвоенный) G=4,96խմ/ժ, H=7մ, N=348--232վտ, n=2650--1520պտ/րոպ	կ-տ	1	60000	60000
5	(+3,3 նիշի) ջեռուցման համակարգի ջրի շրջանառության պոմպ DMH 30/250-40T մակնիշի (сдвоенный) G=0,324խմ/ժ, H=2,9մ, N=192--8,8վտ, n=1440--1260պտ/րոպ	կ-տ	1	50000	50000
6	Համակարգի հետադարձ ջրի մատակարարման պոմպ DPH 60/280-50T մակնիշի (сдвоенный) G=9,05խմ/ժ, H=7,5մ, N=410--235վտ, n=1400---1130պտ/րոպ	կ-տ	1	100000	100000
7	Համակարգի հետադարձ ջրի մատակարարման պոմպ DPH 60/280-50T մակնիշի (сдвоенный) G=7,6խմ/ժ, H=7,6մ, N=410--235վտ, n=1400--1130պտ/րոպ	կ-տ	1	80000	80000
8	Ընդարձակիչ անոթ թաղանթային V=600լ Φ 750մմ H=1830մմ	հատ	1	550000	550000
9	Բաշխիչ և հավաքող կոլեկտոր պոլիարոպիլենային խողովակից Φ 125x17,1մմ L=1,45մ	հատ	2	50000	100000
10	Շվեյլեր N20 L=0,85մ 4հատ	մ	3.4	7000	23800
11	Դեֆլեկտոր Φ 250մմ	հատ	1	20000	20000
